ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ЕГЕГНУТИ ГЮГАПЕТАРАН

գ. Եղեգնուտ հեռ. (037) 6-90-94 093 18 76 56

Թիվ _ 107- 193

« 18 » Նոյեմբերի 2011թ.

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Եղեգնուտի գյուղապետարանը ներկայացնում է Եղեգնուտի համայնքի ավագանու 2011թ. նոյեմբերի 14 - ի թիվ 9 նիստի որոշումները՝ համաձայն հավելվածների:

Առդիր 8 թերթ.

Համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 10900-11
«18» 11 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆՈՒՏԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРИ МАРЗ
ЕГЕГНУТИ ГЮГАПЕТАРАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

14. Նոյեմբերի.2011թ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ԹԻՎ 27

ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 – րդ հոդվածի 4 – րդ մասով

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Եղեգնուտի համայնքի ավագանու 2011թ. նոյեմբերի 14 – ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	ԿՈՂՄ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
Ա. Ռաշոյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Ս. Կարապետյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Է. Աբրահամյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Վ. Մարգարյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Վ. Խուրշուդյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Հ. Հակոբյան	----------	---------- / ստորագրություն/	----------

Համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյան

Հավելված
Եղեգնուտի գյուղական համայնքի
ավագանու 2011թ Նոյեմբերի 14 - ի
թիվ27 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 14 – ի ՆԻՍՏԻ

1. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ:
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

14.Նոյեմբերի.2011թ. ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ԹԻՎ 28_Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1 – ին մասի 18 – րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10 – րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56 – րդ հոդվածի 2 – րդ մասով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Եղեգնուտի գյուղական համայնքի վարչական տարածքում 2012 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող տասներորդ օրը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ո Ւ Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

		ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
Ա. Ռաշոյան	----------	---------- / ստորագրություն/	---------- ----------
Վ. Մարգարյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Ս. Կարապետյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Է. Աբրահամյան	----------	---------- / ստորագրություն/	---------- ----------
Վ. Խուրշուդյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Հ. Հակոբյան	----------	---------- / ստորագրություն/	---------- ----------

Համայնքի ղեկավար Ռ. Մարգարյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Եղեգնուտի համայնքի ավագանու
14 դեկտեմբերի 2011թ. 28_Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ երեք հազար դրամ,

2) սույն կետի «1» – ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201 – ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,

բ. 501 – 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տաս հազար դրամ,

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասհինգ հազար դրամ,

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար դրամ

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կան շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ երկու հազար դրամ,

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի «1» - ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 10 – րդ հոդվածի 1 – ի կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարություն կամ . շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա «Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար «Տեղական տուրքերի և վճարների մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 10 – րդ հոդվածի 1 – ի կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում, շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ,

2) հեղուկ վառելիքի տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի, վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առու վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ:

7. . Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24^{00} – ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքների օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) արկահոլային սպիրտի պարունակությունը մինչև քսան ծավալային տոկոսի արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,

2) թունդ արկահոլային (սպիրտի պարունակությունը քսան և ավել ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար դրամ,

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ,

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երկու հազար դրամ:

11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երեք հազար դրամ:

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երկու հազար դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարը սահմանել երկու հազար դրամ, յուրաքանչյուր մասնակցից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԵՂԵԳՆՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

14 Նոյեմբերի.2011թ. ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ԹԻՎ 29

ԵՂԵԳՆՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի 5 – րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Եղեգնուտի համայնքի սոցիալապես անապահով Արուսյակ Երջանիկի Անեսյանի, Վարազդատ Վաչագանի Այվազյանի ընտանիքներին կերակրողին կորցնելու և Տիգրան Աբելի Գասպարյանի ընտանիքին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ո Ւ Ա Ն Դ Ա Մ Ն Ե Ր

	ԿՈՂՔ	ԴԵՄ	ՉԵՌՆՊԱՀ
Ա. Ռաշոյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Վ. Մարգարյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Ս. Կարապետյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Է. Աբրահամյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Վ. Խուրշուդյան	----------	---------- / ստորագրություն/	----------
Հ. Հակոբյան	----------	---------- / ստորագրություն/	----------

Համայնքի ղեկավար՝ Ռ. Մարգարյան

Հավելված
Եղեգնուտի գյուղական
համայնքի ավագանու
14 նոյեմբերի 2011թ.
թիվ 29 որոշման

Ց Ա Ն Կ

Եղեգնուտի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրվող դրամական օգնության.

1. Արուսյակ Երջանիկի Անեսյան	50 000 հազ. դրամ
2. Վարազդատ Վաչագանի Այվազյան	50 000 հազ. դրամ
3. Տիգրան Աբելի Գասպարյան	50 000 հազ. դրամ